Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հոկտեմբերի 1-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՁԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «Հայաստան»), Բելառուսի Հանրապետությունը (այսուհետ՝ «Բելառուս»), Ղազախստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «Ղազախստան»), Ղրղզստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «Ղրղզստան»), Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ «Ռուսաստան») (այսուհետ համատեղ՝ «ԵԱՏՄ անդամ պետություններ») և Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ «ԵԱՏՄ»),
մի կողմից, և

Սինգապուրի Հանրապետությունը (այսուհետ «Սինգապուր»),

մյուս կողմից,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ իրենց երկարատև ու ամուր բարեկամության և Կողմերի միջև ավանդական բազմակողմանի համագործակցության ամրապնդման կարևորությունը,

ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ Կողմերի՝ ապրանքների առևտուրը, ծառայությունների առևտուրը, ներդրումները և առևտրի հետ կապված բնագավառներն ընդգրկող համապարփակ տնտեսական գործընկերությունը զարգացնելու փոխադարձ ձգտումը,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ստեղծել բարենպաստ միջավայր և պայմաններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Կողմերի միջև փոխադարձ առևտրային կապերի զարգացման և տնտեսական համագործակցության խրախուսման համար,

ՁԳՏԵԼՈՎ վերացնել Կողմերի միջև արգելքները առևտրում և ներդրումների ոլորտում, նվազեցնել բիզնեսի ծախսերը և բարձրացնել տնտեսական արդյունավետությունը, և

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ Կողմերի միջև տնտեսական համագործակցության ընթացքում գտնվող նախաձեռնությունների կարևորությունը, ինչպես նաև համաձայնելով հետագայում ևս զարգացնել Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում առկա տնտեսական գործընկերությունը,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.1
Նպատակները

Սույն Շրջանակային համաձայնագրի նպատակն է ստեղծել ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի միջև, մյուս կողմից, համապարփակ տնտեսական համագործակցության համար շրջանակ, հետևյալի միջոցով.

(a) ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի միջև, մյուս կողմից, տնտեսական և առևտրային հարաբերությունների, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների և Սինգապուրի միջև ներդրումային համագործակցության ամրապնդում և ընդլայնում, և

(b) ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի միջև, մյուս կողմից, ապրանքների առևտրի և ԵԱՏՄ անդամ պետությունների և Սինգապուրի միջև ծառայությունների առևտրի ազատականացում և դյուրացում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների և Սինգապուրի միջև թափանցիկ, ազատական և խթանող ներդրումային ռեժիմի ստեղծում:

Հոդված 1.2

Սահմանումներ

Սույն Շրջանակային համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան նախատեսված չէ.

«օր» նշանակում է օրացուցային օր, ներառյալ՝ հանգստյան և տոնական օրերը,

«Եվրասիական տնտեսական հանձնաժողով» նշանակում է 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի (այսուհետ ԵԱՏՄ մասին պայմանագիր) համաձայն ԵԱՏՄ մշտապես գործող կարգավորող մարմին, և

«Կողմեր» նշանակում է, մի կողմից, ԵԱՏՄ՝ ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված իր իրավասությունների շրջանակներում կամ իր անդամ պետություններ, և, մյուս կողմից՝ Սինգապուր:

Հոդված 1.3

Կարգավորման շրջանակը և հարաբերակցությունը այլ համաձայնագրերի հետ

1. 1.1-րդ հոդվածում շարադրված նպատակներն իրականացվում են հետևյալ համաձայնագրերի միջոցով.

(a) սույն Շրջանակային համաձայնագիր,

(b) Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության միջև, մյուս կողմից, ազատ առևտրի մասին 2019թ. հոկտեմբերի 1-ի համաձայնագիր,

(c) Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին 2019թ. հոկտեմբերի 1-ի համաձայնագիր.և

(d) Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին կնքվելիք համաձայնագրեր՝

i. Բելառուսի և Սինգապուրի միջև,

ii. Ղազախստանի և Սինգապուրի միջև,

iii. Ղրղզստանի և Սինգապուրի միջև,

iv. Ռուսաստանի և Սինգապուրի միջև:

2. 1-ին կետում նշված համաձայնագրերից ոչ մեկը չպետք է նախատեսի որևէ իրավունք կամ պարտավորություն ԵԱՏՄ կամ նրա ցանկացած անդամ պետության համար, եթե նրանք չեն հանդիսանում այդպիսի համաձայնագրի կողմեր:

Հոդված 1.4

Նախարարների խորհրդատվություններ

1. Կողմերը, Կողմերից մեկի հարցմամբ անցկացնում են խորհրդատվություններ առևտրի համար պատասխանատու նախարարների մակարդակով հետևյալ հարցերով.
   a) 1.3-րդ հոդվածի (Կարգավորման շրջանակը և հարաբերակցությունը այլ համաձայնագրերի հետ) 1-ին կետում նշված համաձայնագրերից ցանկացածի գործողության դադարեցում,
   b) ԵԱՏՄ մասին պայմանագրին համապատասխան՝ ԵԱՏՄ-ին նոր անդամ պետության միացում,
   c) ԵԱՏՄ-ից ԵԱՏՄ անդամ պետության դուրս գալը ԵԱՏՄ մասին պայմանագրին համապատասխան, կամ
   d) ցանկացած այլ հարց Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ:
2. 1-ին կետում նշված խորհրդատվությունների մասին հարցումը հայցող Կողմը ուղարկում է մյուս Կողմին գրավոր ձևով դիվանագիտական ուղիներով: Այդպիսի խորհրդատվություններն անցկացվում են հարցումը մյուս Կողմերի ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում հայցող Կողմի տարածքում, եթե Կողմերն այլ բանի վերաբերյալ չեն պայմանավորվել:
3. 1-ին կետում նշված խորհրդատվությունների ընթացքում, Կողմերը հաշվի առնելով ցանկացած համապատասխան գործոնները, ի թիվս այլոց, ուսումնասիրում են արդյոք սույն Շրջանակային համաձայնագրի նպատակներն իրականացվել են թե ոչ, և արդյոք անհրաժեշտություն կա փոփոխություններ կատարել սույն Շրջանակային համաձայնագրում և 1.3-րդ հոդվածի (Կարգավորման շրջանակը և հարաբերակցությունը այլ համաձայնագրերի հետ) 1-ին կետում նշված համաձայնագրերի մեջ:

ԳԼՈՒԽ 2

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 2.1

Փոփոխությունների կատարում

Կողմերը գրավոր ձևով կարող են պայմանավորվել սույն Շրջանակային համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին: Այդպիսի փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2. 2 հոդվածով (Ուժի մեջ մտնելը) սահմանված կարգով:

Հոդված 2.2

Ուժի մեջ մտնելը

Սույն Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, երբ Կողմերը փոխանակում են գրավոր ծանուցումներ, որոնցով հավաստում են, որ կատարել են սույն Շրջանակային համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներքին իրավական ընթացակարգերը: Այդպիսի ծանուցումները կատարվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սինգապուրի միջև:

Հոդված 2.3

Միանալը

1. Սույն Շրջանակային համաձայնագրին ԵԱՏՄ նոր անդամ պետության միանալու հարցը բանակցվում է ԵԱՏՄ, նրա անդամ պետությունների, ներառյալ՝ ԵԱՏՄ այդ նոր ադամ պետությունը, և Սինգապուրի միջև: Նման միացումը իրականացվում է սույն Համաձայնագրի լրացուցիչ արձանագրության կնքման միջոցով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովն անմիջապես ծանուցում է Սինգապուրին ցանկացած երրորդ երկրի կողմից ԵԱՏՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ ստանալու մասին, ԵԱՏՄ անդամակցության թեկնածու երկրի հետ բանակցությունների արդյունքների և ԵԱՏՄ անդամակցելու մասին ցանկացած որոշման ուժի մեջ մտնելու մասին:

3. ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամակցելու հավակնություն ունեցող թեկնածու երկրի միջև բանակցությունների ընթացքում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ձգտում է.

(a) Սինգապուրի հարցման դեպքում և հնարավորության սահմաններում տրամադրել սույն Շրջանակային Համաձայնագրի գործողության ոլորտում ներառված հարցերի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, և

(b) հաշվի առնել ցանկացած արտահայտված մտահոգություն:

Հոդված 2.4

Գործողության ժամկետը և գործողության դադարեցումը

1. Սույն Շրջանակային համաձայնագրի գործողությունն անժամկետ է:

2. Եվրասիական տնտեսական միությունը և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները կարող են դադարեցնել սույն Շրջանակային համաձայնագրի գործողությունը Սինգապուրին գրավոր ծանուցելով, կամ Սինգապուրը կարող է դադարեցնել սույն Շրջանակային համաձայնագրի գործողությունը ԵԱՏՄ-ին գրավոր ծանուցելու միջոցով: Դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցման օրվանից վեց (6) ամիս հետո:

3. Շրջանակային համաձայնագիրը դադարում է գործելուց ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության համար, որը դուրս է գալիս ԵԱՏՄ մասին պայմանագրից՝ ԵԱՏՄ մասին պայմանագրից նրա դուրս գալու օրվանից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Սինգապուրին ծանուցում է այդպիսի դուրս գալու մասին ինը (9) ամիս առաջ:

4. Եթե ԵԱՏՄ անդամ պետությունը սույն Շրջանակային Համաձայնագրից դուրս է գալիս 3-րդ կետի համաձայն, ապա սույն Շրջանակային համաձայնագիրը շարունակում է գործել ԵԱՏՄ-ի և ԵԱՏՄ մնացած անդամ պետությունների և Սինգապուրի համար:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Շրջանակային համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում, 2019 թվականի հոկտեմբերի 1-ին երկու բնօրինակից, անգլերեն լեզվով:

Հայաստանի Հանրապետության կողմից
Բելառուսի Հանրապետության կողմից
Ղազախստանի Հանրապետության կողմից
Ղրղզստանի Հանրապետության կողմից
Ռուսաստանի Դաշնության կողմից
Եվրասիական տնտեսական միության կողմից

Սինգապուրի Հանրապետության կողմից